«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ օրենք) 7-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«4. Ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) և թույլատրելի առավելագույն 3,5 տոննա քաշը գերազանցող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով միջպետական փոխադրումներ (բացառությամբ ոչ առևտրային փոխադրումներ) իրականացնող կազմակերպությունները պետք է ունենան գործարար բարի համբավ, ֆինանսական անհրաժեշտ միջոցներ և մասնագիտական որակավորում։

5. Լիազոր մարմինը միջպետական փոխադրումներ իրականացնելու բոլոր տեսակի իրավունքները տրվում են միայն այն կազմակերպություններին, որոնց վերաբերյալ անհրաժեշտ տվյալներն առկա են լիազոր մարմնի միջպետական փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների էլեկտրոնային գրանցամատյանում։ Էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառվելու համար կազմակերպությունները լիազոր մարմնին ներկայացնում են բանկային տեղեկանք առնվազն 9000 եվրոյին համարժեք դրամ մեկ տրանսպորտային միջոցի դեպքում և առնվազն 5000 եվրոյին համարժեք դրամ՝ յուրաքանչյուր լրացուցիչ տրանսպորտային միջոցի համար, կամ բանկային երաշխիք սահմանված գումարի չափով, ինչպես նաև փոխադրումների կառավարչի մասնագիտական որակավորման վերաբերյալ տեղեկատվություն։
6. Կազմակերպությունը պետք է ունենա մասնագիտական որակավորման վկայական ունեցող փոխադրումների կառավարիչ։ Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ կամ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում անընդմեջ 10 տարվա կառավարման ստաժ

ունեցող անձինք ազատվում են որակավորման քննություն հանձնելուց: Մասնագիտական որակավորման քննություններ ընդունելու և մասնագիտական որակավորման վկայական տալու կարգը, մասնագիտական որակավորման վկայականի նկարագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. 7. Կազմակերպության և փոխադրումների կառավարչի բարի համբավի կորստի հիմնական գործոններ են հանդիսանում խախտումներն ու պատժամիջոցները հետևյալ ոլորտներում՝

1) առևտրային իրավունք.

2) անվճարունակության իրավունք.

3) վճարման և մասնագիտական աշխատանքի հետ կապված պայմաններ.

4) ճանապարհային երթևեկություն.

5) մասնագիտական պատասխանատվություն.

6) մարդկանց կամ թմրանյութերի առևտուր.

7) թվային տախոգրաֆի համակարգ.

8) փոխադրումներին ներկայացվող պահանջներ:

8. 8. Սույն հոդվածի 7-րդ մասում նշված խախտումների տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.Կազմակերպությունները գործարար բարի համբավի, ֆինանսական անհրաժեշտ միջոցների և մասնագիտական որակավորման տվյալների փոփոխության դեպքում տեղեկացնում են լիազոր մարմնին:»:

Հոդված 2. 28-րդ հոդվածում լրացել նոր 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդները պետք է հանձնեն նախնական մասնագիտական որակավորման տեսական քննություն և ստանան մասնագիտական որակավորման վկայագիր (ՄՈՎ): ՄՈՎ ունեցող վարորդներն առնվազն հինգ տարին մեկ պարբերականությամբ պետք է անցնեն մասնագիտական վերապատրաստման դասընթաց, որի վերաբերյալ պետք է նշում կատարվի վարորդի մասնագիտական որակավորման քարտի վրա: Առաջին վերապատրաստման դասընթացը վարորդը պետք է անցնի ոչ շուտ, քան ՄՈՎ-ը ստանալուց հինգ տարի հետո: Մասնագիտական վերապատրաստման գործընթացին և վարորդի որակավորման քարտին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա առաջին օրը: